ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 հոկտեմբերի 2014 թվականի N 146-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2014 թվականի օգոստոսի 20-ի N 02/16.7/13724-14 գրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի N 12779-14 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքոհիշյալ աշխատակիցներին 2014 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ՝ վեց օրով՝ գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության վարչական համալիր՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2014 թվականի ուսումնական տարվա պատրաստության պլանով նախատեսված հավաք-պարապմունքներին մասնակցելու համար.

1) *Էլզա Հովհաննիսյան* - աշխատակազմի ղեկավարի տեղակալ,

2) *Վրեժ Գալոյան* - տեղական ինքնակառավարման և հանրապետական գործաղիր մարմինների հարցերով վարչության պետ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հոկտեմբերի 13
ք. Հրազդան